# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
# N ՀՀ ՆԳՆ ՈՁ ԷԱՃԱՊՁԲ-24/7/Բ/10/ԿՇԾ
# ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

10.04.2024թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին հանձնաժողովի **նախագահ՝**

ՀՀ ՆԳՆ ՈՁ մարտական պատրաստության բաժնի պետ, գ-տ Գ. Միրզոյան (ԳՊ/ԳԱՊ)

**անդամներ՝**

ՀՀ ՆԳՆ ՈՁ մարտական պատրաստության բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Կ. Ամիրյան,

ՀՀ ՆԳՆ ՈՁ շտաբի օպերատիվ բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ձ. Ղազարյան,

ՀՀ ՆԳՆ ՈՁ ֆինանսական բաժնի ավագ սպա , մայոր Հ. Մանուկյան,

ՀՀ ՆԳՆ ՈՁ իրավական ապահովման բաժանմունքի սպա, կապիտան Ք. Թորոսյան.

**քարտուղար՝**

ՀՀ ՆԳՆ ՈՁ ԳՀ և ՓՁ բաժանմունքի սպա, կապիտան Լ. Աբրահամյան (ԳՊ/ՄՀմ):

ՀՀ ՆԳՆ ՈՁ ԷԱՃԱՊՁԲ-24/7/Բ/10/ԿՇԾ ծածկագրով ընթացակարգի գնման հայտի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում առկա են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների անհամապատասխանություններ: Մասնավորապես Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 6-րդ չափաբաժնում հղում է կատարվել ապրանքի կոնկրետ «Frosch» ապրանքանշանին, իսկ 7-րդ չափաբաժնում՝ «Ռախշա» 500 գրամանոց» ապրանքանշանին, սակայն չի ներկայացվել համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի՝ <u>*գնման առարկայի բնութագրերը*</u>՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, իսկ 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց

դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակեն «կամ համարժեք» բառերը:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների: Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը:

Կից ներկայացվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից փոփոխված տեխնիկական բնութագիրը:

Առաջացած խնդիրը շտկելու համար հրավերում կատարվել է համապատասխան փոփոխություններ, ինչպես նաև փոփոխվել է հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 30.04.2024թ., հակադարձ աճուրդը՝ 02.05.2024թ. ժամը 10:00-ին:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | գ-տ | Գ. Միրզոյան (ԳՊ/ԳԱՊ) |
| անդամներ՝ | փ/գ-տ | Կ. Ամիրյան |
| | փ/գ-տ | Ջ. Ղազարյան |
| | մ-ր | Հ. Մանուկյան |
| | կ-ն | Ք. Թորոսյան |
| քարտուղար՝ | կ-ն | Լ. Աբրահամյան (ԳՊ/ՄՀմ) |

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ | Նյութական արժեքների անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Մատակարարման հասցեն |
|---|---|---|---|
| С/ч | **Имя материальных ценностей:** | **Технические характеристики:** | **Адрес доставки:** |
| 6 | **Ախտահանիչ հեղուկ նյութեր (զուգարանի)** | Ախտահանիչ հեղուկ նյութ, նախատեսված զուգարանների մաքրման համար: Վերացնում է մանրէները 100% և ժանգը, պաշտպանիչ շերտի շնորհիվ մաքրությունը պահպանում է 3 օր: Կիտրոնի հակակրաքարային բաղադրիչներով, կիտրոնի բույրով: Փաթեթավորումը՝ 1 լիտրանոց պլաստմասե տարաներով՝ պիտակավորված: Պահպանման ժամկետը ոչ պակաս 80% մատակարարման օրվանից: Պատասխանատուի պահանջով մատակարար կազմակերպությունը պատասխանատու ստորաբաժանմանը պետք է ներկայացնի ապրանքի լաբորատոր հետազոտության արդյունքներ: Մինչև մատակարարումը նմուշը համաձայնեցնել պատվիրատուի հետ: | ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի կենտրոնական պահեստ (քաղաք Երևան, Բագրատունյաց 6-րդ նրբանցք): |
| | Дезинфицирующая жидкость Туалетные принадлежности | Дезинфицирующее жидкое средство, предназначенное для чистки туалетов. Уничтожает на 100% микробы и ржавчину, благодаря защитному слою сохраняет чистоту в течение 3 дней. Содержит лимонные ингредиенты против известкового налета и аромат лимона. Упаковка: пластиковые контейнеры емкостью 1 л, маркированные.Срок годности не менее 80% со дня поставки. По требованию ответственного лица организация-поставщик обязана представить результаты лабораторного исследования продукции в ответственное подразделение. Согласуйте образец с клиентом перед доставкой. | Центральный склад войск полиции МВД РА (г. Ереван, переулок Багратуняца 6) |
| 7 | **Մաքրող նյութեր** | Մաքրող միջոց, ախտահանող, ժանգը հեռացնող, «Ռախշա» կամ համարժեք՝ <<Բինգո>>, <<Բարֆ>>. 500 գրամանոց տարաներով, պիտակավորված: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևույթաակտիվ միջոցների և մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն: Պահպանման ժամկետը ոչ պակաս 80% մատակարարման օրվանից: Պատասխանատուի պահանջով մատակարար կազմակերպությունը պատասխանատու ստորաբաժանմանը | ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի կենտրոնական պահեստ (քաղաք Երևան, Բագրատունյաց 6-րդ նրբանցք): |

| | | | |
|---|---|---|---|
| | | պետք է ներկայացնի ապրանքի լաբորատոր հետազոտության արդյունքներ: Մինչև մատակարարումը նմուշը համաձայնեցնել պատվիրատուի հետ: | |
| | **Порошки для уборки** | Чистящее, дезинфицирующее средство, средство для удаления ржавчины «Рахша» или эквивалент: «Бинго», «Барф», 500-граммовые контейнеры с маркировкой. Безопасность, маркировка и упаковка согласно постановлению правительства РА от 2004 года. Согласно «Техническому регламенту на поверхностно-активные вещества и моющие и чистящие средства, содержащие поверхностно-активные вещества», утвержденному решением N 1795 от 16 декабря. Срок годности не менее 80% от даты поставки. По требованию ответственного лица организация-поставщик обязана представить результаты лабораторного исследования продукции в ответственное подразделение. Согласуйте образец с клиентом перед доставкой. | Центральный склад войск полиции МВД РА (г. Ереван, переулок Багратуняца 6)� |